

ԱՂՔԱՏԱՆԱՄ ԸՆԿ. ԲԱՐԻՋԻ ՀԱՅՈՑ

Société de Bienfaisance
des Arméniens de Paris
17, Rue Damesme 17
Paris (13^e)

ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՀԻՆԳ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

Բարիգլի Աղքատախնամի օժանդակ Հայ Օրիորդաց Միութիւնը քաջալերուած առաջին փորձի բարոյական արդիւնքէն, որոշեց 1929 տարուան համար, իւրաքանչիւրը երկու հազար ֆրանքի հինգ նոր մրցանակներ բաշխել «Առաքինութեան»:

Ասոնք պիտի յատկացուին Բարիգլի եւ չրջակայից մէջ բնակութիւն հաստատած հինգ հայուհիներու, որոնք ֆրանսական այս հիւրընկալ հողին վրայ իրենց ճակտին աւելը քրտինքովը եւ առանց հանրային աջակցութեան դիմելու հոգացին իրենց պարագաները ու տիպար հանդիսացան մեր ցեղին թէ՛ հպարտ եւ թէ՛ համեստ ջանասիրութեան:

Ներկայ կոչով կը հրաւիրենք բոլոր հայերը առանց դաւանական ու կուսակցական խտրութեան, բոլոր Աղգային եւ Հայրենակցական Միութիւնները ու պաշտօնական մարմինները, որ վաւերական տեղեկագիրներով հաճին մատնանիշ ընել իրենց ծանօթ հայ համեստ եւ իրական դիւցազնուհիները:

Յատկապէս կազմուած Մասնախումբը նկատի առնելով անոնց անձնազուգումն աստիճանը, պիտի որոշէ հինգ հայուհիները եւ յառաջիկայ Նոյեմբեր 11 ին, օր Զինագաղարի, պիտի հրաւիրենք երկրորդ անգամ ըլլալով բոլոր հայերը յարգանքի ցոյց մը ընել տարագրութեան մէջ, ամէն երկինքներու տակ հայ վառարանը անմար պահող դիւցազնական հայուհիին:

Այս առթիւ որտի քաղցր պարագ կը համարինք այժմէն իսկ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել Համեստափայլ՝ Տիկին Նոյեմի Գափամաճեանի եւ Տիկին Մարի Կիւլպէնկեանի, Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարի, Երուանդ Աղաթօն պէյի, Տիարք՝ Գալուստ Կիւլպէնկեանի, Պօղոս Էսմէրեանի եւ Սերովբէ Սվաճեանի, որ իրենց ինքնայոժար նուէրներով թոյլատրեցին մեզ կրկիցս մարմին տալ մեր նուիրական գաղափարին:

Մրցանակի մասին նամակներ, տեղեկագիրներ եւ առաջարկներ մինչև յառաջիկայ Սեպտեմբեր 15 քղրաստուով հաճիլ ուղղել Բարիգլի Աղքատախնամ Ընկերութեան Ատենադպիրին հետեւեալ հասցէով. —

Dr. ALLAVERDY (Fils)

27, Rue des Sablons — PARIS (16^e)

Ի դիմաց Աղքատախնամի օժանդակ Հայ Օրիորդաց Միութեան
(ԿՆԻՔ) Ասեմապէս՝ ԱՐՄԷՆ ՄԱՐԳԱՐԵԱՆ
Ասեմադպիր՝ ՄՐԲՈՒՀԻ ՄԱՏԹԵՆՍԵԱՆ
Գումնապէս՝ ՍԷԼՄԱ ԽՈՍՐՈՎԵԱՆ

Յ. Գ. — Այսու միանգամ ընդ միշտ կը յայտարարենք թէ՛ սոյն մրցուածին նկատմամբ ըլլալիք անձնական դիմումները բնաւ երբեք նկատի չի պիտի առնուին:

ՍՏՈՅԱԾ ԵՆՔ

15. **Հ. Բ. Ը. Միուրիւն, Նուպար եւ Նուպարաւեն**, Տպր. «Մասիս», Փարիզ, 8° էջ 47: Ընթերցողի վրայ զեղարուեսական սպագրութիւն մը պատկերազարդ: Ա. Մասը Վսեմ. Պողոս փառա Նուպարի կենսագրութիւնը, Բ. Մասը Հայաստանի մէջ կառուցանելի Նուպարաւեն աւանի ծրագրին ու հաջաւակին մասին տեղեկութիւններ: Այս աս հրահանգիչ տեսակը հրատարակուած է Տ. Խաչատուր Ս. Ժամկոչեանի (Տիբրոյիթ) ծախքով, Հ. Բ. Ը. Միուրեան Ընդհ. Տնօրէնութեան միջոցաւ (11, Square Alboni, Paris), որուն կարելի է դիմել ստանալու համար:

16. **Հաղորդարք Գրանցոցի Առականութեան**, բարձրանեց **Մեսրոպ Նուպարեան**, հրատարակութիւն եւ սպագրութիւն **Հայ Գալոց**, Պրնէէն եւ Ժրնէվ. Զուիցերիա. 1929, 8° էջ 145, գին 1,50 Ֆր. Զուիցերիական. հասցե՝ Ecole Arménienne

Begnins, Vaud, Suisse

17. **Տարեկան Տեղեկագիր** Բարիգի Ազգաստիւնամ Ընկերութեան (Կեդր. Վարչութիւն). 1928 Յնվ. 1—31 Դեկտ. 1928: Երեսուն եւ ութներորդ տարեգրան, **Գեղարուեստական Հայ Տպարան**, Բարիգ. 8° էջ 22:

— Միեւնոյն Տեղեկագրին ժամանակն իսացուի, եւսմայ հասցրողի վրայ սա խորագրով. Exercice 1928.— Ste de Bienfaisance des Arméniens de Paris: Fondée en 1890. Comptes Rendues de la 38ème Année.

18. **ՀՐԱԶԴԱՆ**, Երկամետայ Հանդէս Գրատր — Գեղարուեստաւորութեան. Հրատարակիչներ՝ Մ. Սափուրեան, Ա. Գաբրիէլեան, Վ. Խաչեան. բաժանորդագրութեան պայմաններ.

Յունաստան՝ տարեկան	30 Տրաքիա.
Եւրոպա՝ »	15 Ֆրն. Ֆրանկ.
Ամերիկա՝ »	1 Տոլար.

Հասցե. Rédaction de la Revue HRAZTAN

c/o Aram Kaprielian,

24 Ghama Fix — Dergoutie ATHENS (Grèce)

19. **ԱԼԻՍ** քերթին **Քացառիկ քիւր** (1929 Մարտ-Ապրիլ-Մայիս), գեղատիպ, պատկերազարդ հրատարակութիւն **Նոր Սերաստիոյ Համագործակցական Ընկերութեան**, Տպագր. Նիւ Եարկ, Կոնցակի, մեծագիր էջ 38, գին 5 Սենթ:

Հասցե

Co — Operative Society of New Sivaas,

P. O. Box 479,

Madison Sq. Station, New York

20. **ՀԱՃՋՆ**, Դրական — Գիտական եւ Հասարակական Հանդէս. Օրկան Հանդայ Հայրենակցական Միութեան: Բաժանորդագրութեան պայմաններ տարեկան 40 ժր. Ֆրանսա եւ 3 Տոլար արտասահման. Հասցե.

H A D J E N

Revue Mensuelle Arménienne

S. Krikorian

71 Abonné Colbert, MARSEILLE

Ծանօթ. — Ստացուած է միայն Բ. Տարի քիւ

3 — 4 (Ապրիլ — Մայիս): Կը խնդրուի զրկել միւս հրատարակուած քիւրերն ալ **Սիոնի** հասցէին:

ԲՈՒԺԱՆՔ Է ԳԻՏՈՒԹԻՒՆ

Առողջապահական և Գիտական
ամսաթիւթերէն (միակը իրենց տեսակին մէջ) ԶՐԻ մէկ օրինակ ստանալու համար անմիջապէս հասցէդ զրկէ **M. DERSAHAKIAN** 16, Rue Lamorinière, Anvers (Belgique) կամ **POUJANK** 126, Fb. St. Denis, Paris (X), France. 3—5

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԶԻ

Հայաստան Թիւրքերէն

Թիւրքախօս Հայոց կողմէն եղած խնդրանքին վրայ Ս. Գրիգոր Լուսաւորչին հայաստան թիւրքերէն ծանօթ պատմութիւնը, վեցերորդ անգամ ըլլալով լոյս տեսած է Ս. Աթուռի Տպարանէն, գեղեցիկ թուղթի վրայ, խոշոր տառերով, մաքուր տպագրութեամբ. Գին Մէկ անգլիական շիլին Պապեստինի և Սիւրբիոյ համար. իսկ Ամերիկեան 25 սէնթ՝ միւս բոլոր երկիրներու համար: Փօստի ծախքը մեր վրայ: Տպարան Որքոց Յակոբեանց

Խ Ո Յ Ք Ե Ի Խ Օ Ս Ք

Լոյս տեսաւ Ս. Աթոռիս Տպարանէն հոգելոյս Օրմանեան Սրբազանին ինքնակենսագրութիւնը, ԽՈՂՔ ԵՒ ԽՕՍՔ տիպարով: Ուրաժալ 500 երեսնոց գիրք մը, տպագրուած ընտիր բուրքի վրայ, հեղինակին ամէնէն վերջին լուսանկարով զարդարուած, գին ՄԵԿ ՏՈԼԱՐ կամ ԶՈՐՍ ՇԻԼԻՆ ԱՆԳԼԻՍԱԿԱՆ:

Օրմանեան Սրբազան իր այս գիրքին մէջ շօշափած է իր մանկութենէն մինչեւ 1918, իր Դամասկոս տարագրութիւնը, իր կեանքին ու իր գործունէութեան բոլոր կողմերը, խօսած է իրեն ժամանակակից դէպքերու եւ դժմքերու վրայ, իրեն յատուկ ժողովրդական սահուն եւ հանելի ոնով, որ մեծապէս հետաքրքրական դարձուցած է իր նիւթը:

Դիմել Ս. Աթոռիս Տպարանի Տեսչութեան:

Տ. ՍԱՒԱՆԵԱՆԵՑԻ ՊԱՏԽՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ

Տ. Սաւալանեանցի ՊԱՏԽՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ գիրքին 40րդ ժօրման տպագրուած է: Այս գործը գրաբար է, բայց այսօրուան աշխարհաբարի վերածուած է Գեր. Տ. Մեսրոպ Եպս. Նշանեանի սահուն գրչով:

Կ'արժէ որ Երուսաղէմի պատմութեամբ հետաքրքրուողներ, մա՛նաւանդ անոնք որ կ'ուզեն հանչնալ Հայ Երուսաղէմը, փութան արձանագրել իրենց անունները, հիմակուանէ ապահովելու համար իրենց օրինակը:

Դիմել Տպարանիս Տեսչութեան

Direction de l'Imprimerie du Patriarcat Arménien
JÉRUSALEM — Palestine

ՄԱՍՈՒԼԵ ՏԱԿ Է

Գեր. Մկրտիչ Եպս. Աղաւնունիի ՄԻԱԲԱՆՔ ԵՒ ԱՅՅԵԼՈՒՔ ՀԱՅ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ գործը: Արդիւնք երկարատեւ պրպտութեան, որ կոչուած է հետաքրքրական պակաս մը լեցնել Հայ Երուսաղէմի պատմութեան մէջ: Գործը յատուկ անուններու բառգիրք մըն է ըստ ինքեան, ու պիտի բովանդակէ 1500է աւելի անուններ կենսագրական և պատմական տեղեկութիւններով ճշտացած:

Տպագրութենէն ետքը պիտի որոշուի գիրքին գինը:

22րդ ֆօրման տպագրուած է արդէն:

Անոնք որ կը փափաքին ունենալ այս գիրքը, կրնան այժմէն արձանագրել տալ իրենց անունը և հասցէն, գիմելով Տպարանիս Տեսչութեան:

DIRECTION DE L'IMPRIMERIE DU PATRIARCAT ARMÉNIEN
JÉRUSALEM — PALESTINE